ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Հայկավանի Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Հայկավանի Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 1.Դաստիարակ-1.17 դրույք /140400 ՀՀ դրամ աշխատավարձ/, | 1)**Որակավորման պահանջները**<br><br>1.Դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ: Տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին:<br><br>**2) Ընդհանրական պահանջները**<br><br>Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոնը զբաղեցնողը պետք է իմանա պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները:<br>Ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից:<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը:<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով | 1) դիմում (Ձև 1).<br>2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).<br>3) անձը հաստատող փաստաթուղթ.<br>4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)ինքնակենսագրություն (Ձև 4).<br>6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.<br>7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |
| | | **Նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները:** | | **Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| 2 | Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
| | **Վայրը**՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. **Հայկավան 2-րդ փ.12 մանկապարտեզ** **Օրը**՝ 2025 թվականի հուլիսի 25-**ին** ժամը՝ 11:00: | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. **Հայկավան 2-րդ փ.12 մանկապարտեզ**<br>**Հեռ. 098373793**<br>Էլ.հասցե haykavanmankapartez@mail.ru<br>**Մրցույթը անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:**<br>**Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝** https://escs.am/am/news/11978: | | **2025 թվականի հունիսի 23-ից մինչև 2025 թվականի հուլիսի 18-ը ներառյալ.** |
| | | **Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերից:**<br>**Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել www.azdarar.am, akhuryan.am կայքերում:** | | |